

Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 170

Ժխտական վերագրութիւն – Ժխտական վերագրութեան մէջ Աստուած վերագրում է կամ փոխանցում է մեր մեղքերն ու յանցանքը Յիսուսի հաշիւին՝ մեր փոխանորդը, եւ այս անելով ներում է մեր մեղքերը: Այս վերագրութեան ժխտական առումը հիմնուած է Քրիստոսի քաւարար գործի վրայ՝ այսինքն Քրիստոսի կրաւորական հնազանդութիւնը՝ որը կրեց մեղքի դէմ եղած Աստծոյ բարկութիւնն ու անէծքը մեր համար ու մեր փոխարէն: Այս անելով Նա յագեցրեց Աստծոյ արդար պահանջքը:

Հին Կտակարանում կենդանիների զոհերը խորհրդանշում էին մեղքի փոխանցումը ժողովրդից զոհին, դառնալով մի փոխանորդ քաւութիւն մեղաւորների տեղը: Այդ կենդանիների զոհերը (պատարագները) նախապատկերացնում էին Յիսուս Քրիստոսի գերագոյն զոհը: Հին Կտակարանը նաեւ մարգարէացաւ գալիք Մեսիայի, Աստծոյ Ծառայի փոխանորդական մահը՝ Իր ժողովրդի քաւութեան եւ ներման համար (Եսայիա 53:1-12):

Մատթէոս 20:28-ում Յիսուսը ասեց թէ՛ «Մարդի Որդին չեկաւ որ Իրան ծառայէն, այլ որ Ինքը ծառայէ, եւ շատերի փոխանակ Իր անձը փրկանք տայ» (Յովհաննէս 1:29, 10:11): Խաչի վրայ, Իր ժողովրդի ամբողջ մեղքերը դրուեցին Յիսուսի վրայ, եւ որպէս մեր փոխանորդ եւ մեղք կրողը, Քրիստոսը դատականօրէն անիծեց եւ ուստի կրեց բոլոր Իր ժողովրդի բոլոր մեղքերի դէմ եղած Աստծոյ անսահման եւ անգուսպ բարկութիւնը (Յովհաննէս 19:30, Գաղատացիս 3:13):

Իր պատժական փոխանորդական քաւութեան պատճառով Քրիստոսը կրեց մեր մեղքերի դատական վճիռն ու տուգանքը՝ մեր բոլոր անցեալ, ներկայ եւ ապագայ մեղքերի համար, լիովին եւ բաւարարապէս յագեցնելով Աստծոյ արդարութիւնը: Եւ ուստի մենք ստանում ենք մեր մեղքերի ներում, եւ օրինականօրէն դառնում ենք ազատ մեր մեղքերի դատապարտութիւնից եւ պարտքից (Գործք Առաքելոց 10:43, 13:38-39, Հռովմայեցիս 4:7-8, 7:6, 8:1-2, Եփեսացիս 1:7, Կողոսացիս 1:14, Եբրայեցիս 9:26):

Դրական վերագրութիւն – Դրական վերագրութեան մէջ Աստուած վերագրում է կամ փոխանցում է Քրիստոսի կատարեալ ուղղարարութիւնը մեր հաշիւին, եւ այս անելով սեպում կամ համարում է մեզի որպէս ուղղարար: Այս վերագրութեան դրական առումը հիմնուած է Քրիստոսի գործունեայ հնազանդութեան վրայ՝ ապրելով ուղղարար կեանքը, կատարելապէս հնազանդելով Աստծոյ օրէնքը: Իր մարդեղութեամբ Քրիստոսը դրեց Ինքն Իրեն օրէնքի տակը եւ լրացրեց այդ ինչ որ օրէնքն էր պահանջում մեղաւոր մարդուց (Մատթէոս 3:13-15, Յովհաննէս 4:3, Հռովմայեցիս 5:19, 10:4, Գաղատացիս 4:4-5, Փիլիպպեցիս 3:9, Եբրայեցիս 4:15, 5:8-9):

Մեծ փոխանակումը – Արդարացման վարդապետութիւնը, կրկնակի վերագրութիւնը, նաեւ ճանաչուած է որպէս մեծ փոխանակումը: Իր ժողովրդի մեղքերը վերագրում են Քրիստոսի հաշիւին, եւ Քրիստոսի ուղղարարութիւնը վերագրում է Իր ժողովրդի հաշիւին: Մեր պատճառով Քրիստոսը Աստծուց լքուեց ու անիծեց, եւ Քրիստոսի պատճառով մենք Աստծուց ուղղարար եւ արդար ենք հռչակուած:

Կան շատ համարներ Սուրբ Գրքում որոնք արտայայտում են Քրիստոսի գործի երկու առումները մեր համար եւ փոխարէն (Եսայիա 53:11, Զաքարիա 3:1-5, Հռովմայեցիս 8:3-4, Ա. Պետրոս 3:18): Ամենապարզ համարներից մէկն է Բ. Կորնթացիս 5:21-ը ուր Պօղոսը գրում է թէ՛ «Որովհետեւ Աստուած Նրան, որ մեղք չգիտէր, մեզ համար մեղք արաւ (Ժխտական). որ մենք Աստծոյ արդարութիւնը լինենք Նրանումը (դրական)»: Մեր մեղքերի պատճառով Աստուած համարեց Յիսուսին եւ վարուեց Նրա հետ որպէս մի մեղաւոր, որպէս մի օրինաբեկ. եւ Յիսուսի ուղղարարութեան պատճառով Աստուած համարում է մեզ եւ վարում է մեզի հետ որպէս ուղղարար, որպէս օրինապահներ: Կարելի է յիշել թէ վերագրել նշում է սեպել կամ համարել, եւ ուրեմն այս կրկնակի վերագրութեան մէջ թէպէտ Յիսուսը սեպում է որպէս մի մեղաւոր, սակայն Նա յիրաւի կամ ներքնապէս չի դառնում մի մեղաւոր. եւ նոյնպէս էլ թէպէտ մեղաւորներ սեպում են որպէս ուղղարար, սակայն նրանք յիրաւի կամ ներքնապէս չեն դառնում ուղղարար: Արդարացման մէջ մենք դրքայինօրէն հռչակուած ենք որպէս արդար, իսկ գործնականօրէն մենք դեռեւս մեղաւորներ ենք: Ինչպէս Լուիթերը ասեց, մենք «միեւնոյն ժամանակ արդար եւ մեղաւոր ենք» (simul iustus et peccator):

Մենք դատուում ենք անմեղ Քրիստոսի մահովը, եւ դատուում ենք ուղղարար Նրա կեանքովը: Երբ Աստուած նայում է մեզի Նա տեսնում է Քրիստոսի կատարեալ ուղղարարութիւնը, եւ ուստի արդար է հռչակում մեզ: Միմիայն այսպէս վերագրութեան վարդապետութեան միջոցով է Աստծոյ օրէնքը լրանում: Աստուած Ինքն յագեցրեց հենց Իր երկպառակ պահանջները՝ պատժելով մեղքը ու մատակարարելով ուղղարարութիւնը: Երկու պայմաններն էլ էական են մեղաւորների արդարացման ու փրկութեան համար: Եւ այսպիսով Աստուած մնում է միեւնոյն ժամանակ «արդար եւ արդարացնող նրան որ Յիսուսին է հաւատում» (Հռովմայեցիս 3:26):